ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 38-Ա/2 **«10» հունվարի, 2025 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 574-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 1954-Ա/2 հրամանով ստեղծված Մասնագիտական փորձագիտական խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 20-ի նիստի N 2 արձանագրությունը, ինչպես նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից ստորագրված արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի ապրիլի 23-ի N 574-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ

ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ցանկը՝ համաձայն Հավելվածի:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

1) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը.

2) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը.

3) ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2025 թվականի փետրվար ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
10 հունվար 2025 թ. N
N 38-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
«ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ

	Ծածկագիր	Ղեկավար	Կազմակերպություն	Վերնագիր	Ֆինանսավորման ծավալ (հազ. դրամ)
1	25SC-CNR-1C003	Իշխանյան Արթուր Միքայելի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	Մաթեմատիկական ֆիզիկայի Հոյնի դասի առաջադեմ հավասարումների լուծման թվային մեթոդներ և հարակից կիրառություններ	5000.0
		Կլեմենտե Չեզարանո	ԻՀ ԱՀԽ «Մաուրո Պիկոնե» կիրառական մաթեմատիկայի ինստիտուտ		
2	25SC-CNR-1F014	Խաչատրյան Աննա Սերժիկի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ	Ծանր մետաղներով աղտոտված թափոնաջրերի կենսավերականգնումը	5000.0
		Բարբարա Կասենտինի	ԻՀ ԱՀԽ Ջրային հետազոտությունների ինստիտուտ		
3	25SC-CNR-1B006	Խաչատրյան Հրանտ Հարությունի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	DeepRF: Խորը ուսուցմամբ ռադիոհաճախականության վրա հիմնված տեղորոշման և քարտեզագրման խնդիրների լուծում սինթետիկ տվյալներով	5000.0
		Թեոֆանիս Ռապտիս	ԻՀ ԱՀԽ Ինֆորմատիկայի և հեռահաղորդակցության ինստիտուտ		
4	25SC-CNR-1C009	Ծառուկյան Լուսինե Մկրտչի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	Ինովացիոն գծային և ոչ գծային օպտիկական մոտեցումներ կենսաբանական նմուշների ոչ ինվազիվ պատկերման համար՝ համեմատական հետազոտումներ և վերլուծություն	5000.0
		Ռիկարդո Չիկի	ԻՀ ԱՀԽ Օպտիկայի ազգային ինստիտուտ		
5	25SC-CNR-6A002	Հակոբյան Հայկ Երջանիկի	«Մատենադարան» Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ	Հպումի պաշտամունքը. թաքնված սուրբ ձեռագրերը Հայաստանում, սրբազան պաշտամունքի նյութական չափումները և հաղորդակցության ազդեցությունը Միջերկրածովյան ավազանում մինչ վաղ արդի շրջանում	5000.0
		Իզաբելլա Չեկինի	ԻՀ ԱՀԽ Միջերկրածովյան Եվրոպայի պատմության ինստիտուտ		

6	25SC-CNR-1D005	Հայրապետյան Լիլիթ Վալերիի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ	Չհագեցած ամոնիումային աղերի ներմոլեկուլային ցիկլացում-ճեղքում, վերախմբավորում-դեամինացում և ստացված արգասիքների կենսաբանական հատկությունների հետազոտում	5000.0
		Ֆրանչեսկո Ատանասիո	ԻՀ ԱՀԽ Բյուրեղագիտության ինստիտուտ		
7	25SC-CNR-1D004	Մկրտչյան Աննա Ֆելիքսի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ	Պեպտիդների կայունության և կենսաբանական ակտիվության բարելավում. չկոդավորող ամինաթթուների ներառման ուսումնասիրություններ	5000.0
		Բարբարա Բիոնդի	ԻՀ ԱՀԽ Կենսամոլեկուլային քիմիայի ինստիտուտ		
8	25SC-CNR-1D008	Սարգսյան Տաթևիկ Հովհաննեսի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ	Բնական պեպտիդներից մինչև պեպտիդոմիմետիկներ և սինթետիկ նմանակներ. նոր հակամանրէային և հակասնկային միացությունների մշակում	5000.0
		Ալեսանդրո Գորի	ԻՀ ԱՀԽ «Ջուլիո Նատտա» քիմիական գիտությունների և տեխնոլոգիաների ինստիտուտ		
9	25SC-CNR-1D007	Սիմոնյան Հայարփի Մանթաշի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Թիոֆլավինանման կողմնային շղթաներով սինթետիկ ամինոթթուների ստացում և կիրառում	5000.0
		Ջովանի Ռովիելլո	ԻԽ ԱՀԽ Կենսակառուցվածքների և կենսապատկերման ինստիտուտ		
10	25SC-CNR-4C010	Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	Պոտենցիալ տոքսիկ տարրերի հողից-կարտոֆիլ փոխանցման գործոնների վերհանում՝ երկրաքիմիական կոմպոզիցիոն տվյալների վերլուծության կիրառմամբ	5000.0
		Իլարիա Գուալիարդի	ԻՀ ԱՀԽ Միջերկրածովյան տարածաշրջանում գյուղատնտեսության և անտառային համակարգերի ինստիտուտ		